Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
նոյեմբերի 26-ի N 1717-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական և մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի իրականացման իրավունքի լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական և մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի իրականացման իրավունքի համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և արհեստավորի կամ կրտսեր մասնագետի կամ մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի՝ ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ կազմակերպման ձևերի, կրթության հիմքերի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների օտար լեզվով ուսուցում իրականացնելու (բացառությամբ համապատասխան մասնագիտական կրթության մակարդակի որակավորման ծրագրով նախատեսված ուսումնական մոդուլներ, դասընթացներ կամ դրանց

առանձին թեմաներ դասավանդվելու դեպքերի) գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու մասին որոշումն ընդունվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա, իսկ ՀՀ կառավարության բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման մասնագիտացված կառույցի ստեղծումից հետո (այսուհետ՝ Մասնագիտացված կառույց)՝ այդ կառույցում գործող լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ միջնորդագիրը ներկայացնում է կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի ղեկավարը:

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումն ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» օրենքին և սույն կարգին համապատասխան:

6. Լիցենզավորված անձանց՝ լիցենզիայի հետ միասին տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մասը: Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված որակավորման ծրագրի մասով արված ցանկացած փոփոխություն սահմանվում է լիցենզիայի ներդիրում, և յուրաքանչյուր փոփոխության դեպքում տրվում է հերթական ներդիր: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը:

7. Լիցենզավորված անձինք կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին են ներկայացնում լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություն, որի ձևը հաստատում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը: Հաշվետվությունները ներկայացվում են լիցենզիան ստանալու

հաջորդ տարվանից՝ տարեկան մեկ անգամ, և դրանք ներկայացնելու ժամկետ է համարվում լիցենզիան ստանալու հաջորդ օրը: Տեսչական մարմինն ուսումնասիրում է ներկայացված հաշվետվությունները և լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նկատմամբ խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ յուրաքանչյուր ամսվան հաջորդող 15 օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին է ներկայացնում ամփոփ տեղեկատվություն:

8. Օտարերկրյա քաղաքացիների օտար լեզվով ուսուցում իրականացնելու գործունեության թույլտվություն կարող է տրվել միայն տվյալ որակավորման ծրագրով լիցենզավորված ուսումնական հաստատություններին:

2. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

9. Մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական և մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունքի լիցենզիա ստանալու համար «Կրթության մասին» օրենքի 41-րդ, «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքի 11-րդ հոդվածների, «Լիցենզավորման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ իրավաբանական անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում են իրավաբանական անձի անվանումը և կազմակերպաիրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը (e-mail), որակավորման (ուղղվածության) ծրագրի անվանումը, կազմակերպման ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ուսուցման ավարտին տրվող որակավորումը, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորա-

տորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում հրաձգարանի, մարզահրապարակի, ուսումնաարտադրական տարածքների և բազաների, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան).

2) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող հասարակական շինությունների նպատակային նշանակությանը համապատասխան տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

3) տեղեկանք մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի վերաբերյալ, որտեղ նշվում են մանկավարժների և ուսումնաօժանդակ կազմի անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, պաշտոնը, առարկան, մոդուլը, որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, որակավորումը, ստաժը (վարչական/մանկավարժական), տարակարգը (ձև N 2).

4) տեղեկանք արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած տարածքների, այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի, որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա), հրաձգարանի, մարզահրապարակի, ուսումնաարտադրական տարածքների և բազաների, օժանդակ (բակ, պահեստային մակերես և այլն) տարածքների (ձև N 3).

5) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

6) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի համար կլինիկական պրակտիկայի ապահովվածության վերաբերյալ, ընդ որում, սեփա-

կան կլինիկական բազաների բացակայության դեպքում ներկայացվում են համապատասխան այլ բազաներից օգտվելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված պայմանագրերի պատճենները.

7) արհեստավորի կամ կրտսեր մասնագետի կամ մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրերի ուսումնական պլանը, առարկայական և մոդուլային ծրագրերի ցանկը.

8) առողջապահության և քաղաքաշինության բնագավառի համապատասխան մարմինների կողմից տեղեկանք լսարանային տարածքների, մարզադահլիճի, լաբորատոր տարածքների և ուսումնաարտադրական բազաների սանիտարահիգիենիկ և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխանության մասին.

9) զարգացման հայեցակարգի առկայությունը, որով սահմանվում են կրթական ծրագրի տվյալ մակարդակի ներդրման նպատակը և գործողությունները.

10) հանրային և մասնավոր մասնագիտական ուսումնական հաստատությունների դեպքում՝ տեղեկանք ուսանողների առնվազն հինգ տոկոսին ֆինանսական աջակցություն տրամադրելու պարտավորության մասին:

10. Հայտատուն լիցենզիա ստանալու համար սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնում է թղթային տարբերակով, իսկ 2029 թվականի հունվարի 1-ից բացառապես էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Լիցենզավորման ենթակա գործունեության վայրի փոփոխման կամ այդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով նոր վայրում գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզավորված անձինք ներկայացնում են սույն կարգի 9-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթեր:

12. Արհեստավորի կամ կրտսեր մասնագետի կամ մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի գծով՝ ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ կազմակերպման ձևերի, կրթության հիմքերով գործունեության թույլտվություն ստանալու նպատակով լիցենզավորված անձինք ներկայացնում են սույն կարգի 9-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթեր: Ըստ կազմակերպման ձևերի, կրթության

հիմքերի, արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի գծով գործունեության թույլտվություն ստանալու կամ ըստ կուրսերի սովորողների նախատեսվող սահմանային տեղերի թվերի ավելացման համար փաստաթղթերը ներկայացվում են միայն տվյալ որակավորման (ուղղվածության) կրթական ծրագրի մասով:

13. Նոր ստեղծվող մասնագիտական ուսումնական հաստատության կրթական ծրագիր իրականացնելու իրավունքը տրամադրվում է լիցենզիայի հետ միաժամանակ՝ առնվազն մեկ որակավորման ծրագրի համար, և լիցենզավորումն իրականացվում է ինչպես կրթական ծրագիր իրականացնելու իրավունքի, այնպես էլ համապատասխան որակավորման (ուղղվածության) ծրագրի լիցենզավորման մասով: N 5 հավելվածով սահմանված պահանջները սույն կարգով նախատեսված լիցենզավորման ընթացակարգի նկատմամբ կիրառելի չեն: Սույն կարգի համար կիրառելի են N 6 հավելվածի NN 1, 2 և 3 ձևերը:

14. Սույն կարգի 9-րդ կետով նախատեսված լիցենզիայի պայմաններին և պահանջներին հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով լիազոր մարմնի, իսկ ՀՀ կառավարության բարձրագույն և մասնագիտական կրթության որակի ապահովման մասնագիտացված կառույցի ստեղծումից հետո՝ Մասնագիտացված կառույցի կողմից իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Լիցենզավորման պարտադիր պահանջներն ու պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N 1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N 1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմի պահանջի մասով՝

ա. հիմնական մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմի պահանջի մասով՝ հաստատության մանկավարժական և ուսումնաօժանդակ աշխատողների կազմի համապատասխանությունը «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքով սահմանված պահանջներին, առկայության դեպքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված՝ ուսումնաօժանդակ և մանկավարժական պաշտոնների նկարագրերին ներկայացվող հիմնական չափանիշներին, մանկավարժական կազմի առնվազն 30%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հանդիսանում է հիմնական աշխատավայր, իսկ օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝ տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նաև ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1295-Ն որոշման հավելվածի 20-րդ կետի պահանջները,

բ. աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևերի կիրառման դեպքում՝ գործատուի հետ համագործակցության շրջանակը սահմանող փաստաթղթի (հուշագրի, պայմանագրի) և դրա իրագործումն ապահովող ուսումնական համապատասխան մարդկային ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի սեպտեմբերի 10-ի N 86-Ն հրամանի.

3) ուսումնական տարածքի և լաբորատոր բազայի ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանոցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային սենյակի) որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում ուսումնաարտադրական տարածքների և բազաների, համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 14-ի N 532 և մայիսի

3-ի N 379 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1490-Ն որոշմամբ, իսկ հրաձգարանի պահանջի մասով ՀՀ ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 16-ի «Հրաձգարաններին ներկայացվող շենքային, տեխնիկական, տնտեսական, անվտանգության այլ պահանջները, ինչպես նաև հրաձգության հրահանգիչների համար քննություն հանձնելու կարգը, հրաձգության հրահանգչի որակավորման տրամադրման, որակավորումից զրկելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 8-Ն հրամանով սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման, իսկ գրադարանների, մարզադահլիճների, հրաձգարանների և մարզահրապարակների դեպքում հիմք է ընդունվում նաև ծառայությունների մատուցման պայմանագրի առկայությունը) հաստատող փաստաթղթերի առկայությունը,

բ. լաբորատորիաները, ուսումնաարտադրական տարածքները (արհեստանոցները) և բազաները, մարզադահլիճը որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում լաբորատորիաների, ուսումնաարտադրական տարածքների (արհեստանոցների) և բազաների, մարզադահլիճի հագեցվածության համապատասխանությունը որակավորումների ազգային շրջանակի և ոլորտային որակավորումների շրջանակային նկարագրերի պահանջներին: Հրաձգարանների հագեցվածության համապատասխանությունը ՀՀ ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 16-ի «Հրաձգարաններին ներկայացվող շենքային, տեխնիկական, տնտեսական, անվտանգության այլ պահանջները, ինչպես նաև հրաձգության հրահանգիչների համար քննություն հանձնելու կարգը, հրաձգության հրահանգչի որակավորման տրամադրման, որակավորումից զրկելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N 8-Ն հրամանով սահմանված հաստատված չափաքանակների պահանջներին: Հեռավար ձևով կրթություն կազմակերպելու դեպքում՝ ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական (արհեստա-

գործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ուսուցման կարգին համապատասխան ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ էլեկտրոնային կապի միջոցների,

գ. բժշկական կրթական ծրագրերի մասով նաև՝ կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը,

դ. աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ձևերի կիրառման դեպքում՝ գործատուի հետ համագործակցության շրջանակը սահմանող փաստաթղթի (հուշագրի, պայմանագրի) և դրա իրագործումն ապահովող համապատասխան նյութատեխնիկական ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունները համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2026 թվականի սեպտեմբերի 10-ի N 86-Ն հրամանի, իսկ ուսումնական հաստատությունում իրականացվելու դեպքում՝ տեղեկություններ նյութատեխնիկական ռեսուրսների վերաբերյալ.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝ ըստ կազմակերպման ձևերի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական և մոդուլային ծրագրերի համապատասխանությունը որակավորման (ուղղվածության) ծրագրերի գծով տվյալ մակարդակի յուրաքանչյուր որակավորման շրջանակային նկարագրի պահանջներին, իսկ օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում հաստատության կողմից իրականացվող համապատասխան օտար լեզվով ուսումնական ծրագրերի և պլանների առկայությունը.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունն իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է ներառի մասնագիտական և գեղարվեստական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ցուցադրական, աուդիո-վիդեո և մուլտիմեդիա ուսումնական նյութեր, իսկ օտարերկրացիների համար օտար լեզուներով ուսուցում կազմակերպելու դեպքում՝ նաև օտարալեզու մասնագիտական գրականությամբ: Ուսումնական հաստատությունը կարող է ունենալ նաև էլեկտրոնային գրականություն.

6) ուսումնաարտադրական և կլինիկական պրակտիկայի բազայի մասով՝ համապատասխան բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը:

4. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում են «Լիցենզավորման մասին» օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

17. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է նախարարություն, իսկ կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կարգադրագիրը կատարելու մասով՝ վերջինիս:

Ձև N 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

_____ -ին
_____ - ից
(Իրավաբանական անձի, լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

_____
(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

_____
(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

Հ Ա Յ Տ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

NN ը/կ	Դասիչը	Որակավորման (ուղղվածության) ծրագիրը	Կազմա-կերպման ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողու-թյունը	Ուսուցման ավարտին տրվող որակա-վորումը	Ավար-տական փաստա-թուղթը
				1	2	3	4	5				

Կ.Տ.

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 2

_____ _____ թ.

_____
(կազմակերպության անվանումը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Կ.Տ.

Տնօրեն (ռեկտոր) _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, այն բուհի անվանումը, որն ավարտել է	Որակավո-րումը	Պաշտոնը, դասավանդած առարկան կամ մոդուլը	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ), աշխատանքային պայմանագրի համարը, կնքման տարեթիվը և գործողության ժամկետը: Սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի համարը	Ստաժը (վարչական) մանկա-վարժական	Տարակարգը

Ձև N 3

_____ _____ թ.

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____ _____
(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից՝

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը (քառ. մետր)	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Դասասենյակ			
Լաբորատորիա			
Վիվարիում (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)			
Կլինիկական ամբիոն (բազա) (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			

Ուսումնաարտադրական բազա (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)			
Մարզահրապարակ (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)			
Հրաձգարան (որակավորման շրջանակային նկարագրով նախատեսված լինելու դեպքում)			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան-ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

1) լաբորատորիաների, արհեստանոցների, հրաձգարանի, գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա) հագեցվածության ցուցակը.

2) մարզագույքի ցուցակը:

Ձև N 4

_____ _____ թ.

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրեն _____ _____
(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____ , որից՝ դասագրքեր _____,

ծրագրային գեղարվեստական _____ , ուսումնամեթոդական _____ ,

ուսումնաօժանդակ _____ , էլեկտրոնային-տեղեկատվական _____ ,

քարտեզ _____ ,

այլ _____ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

26.11.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ